

— Բայց ի՞նչ կը նշանակեն այդ խօսքերը, որ դա զրուցեր է. «Թուղթ մը գրեցի, որ գաւառ մը իրեն օժիտ բերաւ»:

— Չգիտեմ իշխանուհի, որովհետեւ երբ այդ խօսքերն ըսաւ Յայր Սուրբը...

— Ի՞նչ Յայր Սուրբը, ընդհատեց Յեղիսէ խստութեամբ, այդ էր պակաս, որ այսպիսի անզգամներ «Յայր Սուրբ» անուանէինք:

— Կը ներես իշխանուհի, բերնի վարժութիւն է այն գիշերուընէ մնացած:

Գուրգէն կը ծիծաղէր բարձրաձայն. խոսքով, որ ուշադիր էր միայն եւ ամենեւին նշան մը չէր տուած մինչեւ այն վայրկեան փոքրիկ մը ժպտեցաւ, իսկ Յեղիսէ բարկացայտ աչքերով՝ կամաց եւ դողդիջուն ձայնով ըսաւ սպասաւորին.

— Գնա՛, այդ մարդն առանց շղթայի, առանց պահապանի ներսի մեծ սենեակը տար, եւ սպասէ մինչեւ որ մենք գանք:

Եւ երբ Վահրիճ գնաց, ելաւ ձայնեց նաժիշտներուն, տղան դայեկին յանձնեց, եւ Գուրգէնի թեւէն բռնելով ու խոսքովու քով բերելով լուրջ եւ մեղադրական ձեւով ըսաւ.

— Գուրգէն, ես հիմա անոր կը զարմանամ թէ այնչափ տարիներ դիս ինչպէ՞ս չի մոռցար. միթէ՞ կարելի է այդ անզգամ չարագործը մոռնալ՝ իւր ըրածը չիշել, եւ թողուլ, որ երթայ իւր անարդ գահասիրութեամբ, անխիղճ եւ անպատկառ շարունակէ իւր անզգամութիւնը, անմեղ արտասուաց եւ ո՛ր գիտէ արեանց պատճառ լինի. այս իշխանութիւն չէ, այս տէրութիւն չէ, իշխանաց պարտքը ես այսպէս չեմ հասկնար: Շատ ուրախ եմ, որ խոսքով իշխանն էլ այստեղ է եւ դատաւոր կրնայ լինիլ մեր մէջ:

— Բայց ո՞վ քեզի ըսաւ, սիրելի Յեղիսէ, թէ իրաւունք չունիս. ես տարի մ'է այնչափ զբաղած եմ պատերազմներով, որ ամէն